ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«15» օգոստոս 2025թ.
No 1/50914-2025

«ԳՈՌ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ» ԱՁ-ԻՆ
Ք.ԵՐԵՎԱՆ, ՉԵԽՈՎԻ-16, ԲՆ.10,
ԷԼ.ՓՈՍՏ՝ INFO@SECURITYBUILD.AM, PCHELPER2018@GMAIL.COM,
ՀԵՌ. (055) 11-41-01

Հարգելի պարոն Նիկողոսյան,

Տեղեկացնում եմ Ձեզ, որ սույն թվականի հուլիսի 2-ին ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետև՝ Պատվիրատու) և «Գոռ Նիկողոսյան» ԱՁ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև կնքված ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-25/3-1 ծածկագրով ՀՀ պետական եկամուտների կարիքների համար համակարգչային ծրագրային ապահովումների տարեկան արտոնագրերի մատուցման գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը ստանձնել էր համակարգչային ծրագրային ապահովումների տարեկան արտոնագրերի մատուցման պարտավորությունը՝ համաձայն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների և նույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 2 հավելվածով սահմանվել էր ծառայությունների մատուցման ժամանակացույց՝ 30 օրացույցային օր:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքը՝ 2025թ-ի օգոստոսի 8-ին տվյալ գնման առարկայի մասով մասնագիտական խմբի առաջարկությամբ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի կողմից Կատարողի էլեկտրոնային փոստի հասցեին (info@securitybuild.am, pchelper2018@gmail.com) ուղարկվել է համապատասխան իրազեկման գրություն՝ տեղեկացնելով, որ ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-25/3-1 ծածկագրով գնման պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցման վերջնաժամկետը լրացել է 03.08.2025 թվականին և մինչ օրս Կատարողի կողմից

գնման պայմանագրով նախատեսված 1-ին, 2-րդ, 3-րդ և 5-րդ չափաբաժիններով ստանձնած պարտավորությունները փաստացի չեն կատարվել:

Քանի որ, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի բնականոն աշխատանքային գործունեության ապահովման համար տվյալ համակարգչային ծրագրային ապահովումները ունեն առաջնային անհրաժեշտություն, հետևաբար աշխատանքների իրականացման համար տվյալ գնման առարկայի մասով մասնագիտական խմբի կողմից Կատարողի կողմից մատուցվելիք ծառայության համար սահմանվել է նոր վերջնաժամկետ՝ մինչև 2025 թվականի օգոստոսի 11-ը և նաև տեղեկացվել է, որ սահմանված ժամկետում պարտավորությունները չիրականացնելու դեպքում Պատվիրատուն ստիպված կլինի հիմք ընդունելով ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-25/3-1 ծածկագրով գնման պայմանագրի 2-րդ կետի 2.1.3-րդ ենթակետի «բ» պարբերությունը՝ միակողմանի լուծել պայմանգիրը և պայմանագրի մասով գանձել «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված որակավորման և պայմանագրի ապահովման գումարները, պայմանագրով նախատեսված տուգանքը և տույժերը, ինչպես նաև կնախաձեռնի «Գոռ Նիկողոսյան» ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-25/3-1 ծածկագրով գնման պայմանագրի 2-րդ կետի 2.1.3-րդ ենթակետի «բ» պարբերությունը՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն ստիպված է միակողմանի լուծել պայմանգիրը և պայմանագրի մասով գանձել «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված 1 500 000 ՀՀ դրամի որակավորման և 1 000 000 ՀՀ դրամի պայմանագրի ապահովման գումարները:

Միևնույն ժամանակ Ձեզ եմ ներկայացնում Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու մասով հաշվարկված տուգանքի և տույժերի հաշվարկը.

տուգանքի հաշվարկ՝ 7 728 000 X 0.5% = 38 640 ՀՀ դրամ,

տույժի հաշվարկ՝ 7 728 000 X 0.05% = 38 640 ՀՀ դրամ,

10 աշխատանքային օրվա ուշացման համար՝ 3864 X 10 = 38 640 ՀՀ դրամ:

Տեղեկացնում եմ, որ «Գոռ Նիկողոսյան» ԱՁ ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին

0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.src.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

փոխանցել 77 280 ՀՀ դրամ՝ Պայմանագրի 5.2 և 5.3 կետերի համաձայն որպես տուգանք և տույժ:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետով սահմանված դրույթները չպահպանելու դեպքում Պատվիրատուն կնախաձեռնի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ընթացակարգը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կատ.՝ Սևադա Հակոբյան
ՀՀ ՊԵԿ թվային հետախուզության լաբորատորիա բաժին
Հեռ.՝ 094-654-998